

## Մ Ա Ս II

### Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Ե Վ Հ Ա Ր Կ Ա Բ Յ Ո Ւ Ջ Ե Տ Ա Յ Ի Ն Հ Ի Մ Ն Ա Կ Ա Ն Ց Ո Ւ Ց Ա Ն Ի Շ Ն Ե Ր Ի Կ Ա Ն Խ Ա Տ Ե Ս Ո Ւ Մ Ն Ե Ր

## Մ Ա Ս II - Ա

### Տնտեսական ցուցանիշների կանխատեսումներ

#### Վերջին տարիների սոցիալ-տնտեսական միտումները

Վերջին տարիները բնորոշվում են Հայաստանի Հանրապետությունում տնտեսության զարգացման և բնակչության կենսամակարդակի բարելավման հստակ միտումներով:

Մասնավորապես, սկսած 1994 թվականից հանրապետությունում արձանագրվել է անընդմեջ տնտեսական աճ՝ 1994-2006 թվականներին կազմելով միջինը՝ տարեկան 8.6 %: Հատկանշական է, որ 2002-2006 թվականներին տնտեսական աճը կազմել է երկնիշ թիվ: 2007 թվականին նույնպես սպասվում է ՀՆԱ-ի տարեկան իրական աճի բարձր տեմպ՝ 11.1 %:

2002-2006 թվականներին արձանագրված գնաճի ցուցանիշը միջինում պահպանվել է վերահսկելի շրջանակներում (2006 թվականին միջին տարեկան սղաճը կազմել է ընդամենը 2.9%), սակայն տարեվերջում գնաճի համեմատաբար ավելի բարձր մակարդակ՝ 5.2%:

2006 թվականին և 2007 թվականի առաջին յոթ ամիսների ընթացքում առավել ամրապնդվեցին վերջին տարիների դրական զարգացումները տնտեսական ակտիվությունը բնութագրող ցուցանիշների

բնագավառում: Մասնավորապես, 2005 թվականի համեմատությամբ 2006 թվականին զբաղվածության մակարդակը (տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ) աճել է շուրջ 0.7 տոկոսային կետով:

Տնտեսական ակտիվության մակարդակի բարձրացումը դրական ազդեցություն ունեցավ նաև բնակչության դրամական եկամուտների և ծախսերի համամասնության վրա: 2006 թվականին 2005 թվականի համեմատությամբ բնակչության դրամական եկամուտների և ծախսերի աճը համապատասխանաբար կազմել է 19.2 % և 18.3 %, որի արդյունքում եկամուտների գերազանցումը ծախսերի նկատմամբ կազմել է շուրջ 71.6 մլրդ դրամ:

Մակրոտնտեսական զարգացումները դրական են ազդել նաև աղքատությունը բնութագրող ցուցանիշների վրա: 2005 թվականի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքներով 2005 թվականին աղքատության մակարդակը կազմել է 29.8 %՝ 2004 թվականի 34.6 %-ի դիմաց, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 4.6 %՝ 2004 թվականի 6.4 %-ի դիմաց:

2005 թվականին շարունակել է նվազել նաև անհավասարությունը թե՛ ըստ սպառման և թե՛ ըստ եկամտի ցուցանիշների: Ջինիի գործակցի միջոցով գնահատված անհավասարության ցուցանիշները վկայում են, որ Հայաստանում բնակչության բևեռացումն ավելի խորն է ըստ եկամուտների ցուցանիշի՝ սպառման ցուցանիշի համեմատ: Այսպես, 2004 թվականի համեմատ Ջինիի գործակիցն ըստ սպառման 2005 թվականին նվազել է ընդամենը 0.003 տոկոսային կետով, մինչդեռ Ջինիի գործակիցն ըստ եկամուտների կազմել է 0.359՝ 2004 թվականի 0.395-ի համեմատ:

Շարունակվում է պետության ֆինանսական կարողությունների ամրապնդման գործընթացը: Սկսած 2001 թվականից արձանագրվել են հարկային եկամուտների անընդմեջ աճ և դրան զուգահեռ՝ պետական բյուջեի դեֆիցիտ/ՀՆԱ-ի ցուցանիշը 3%-ի սահմաններում պահպանելու հստակ միտումներ:

## **Տնտեսական ցուցանիշների կանխատեսումներ**


### **Իրական հատված**

2002-2006 թվականներին արձանագրվեցին համախառն ներքին արդյունքի բարձր աճի տեմպեր՝ միջինում տարեկան 13 %, որը բավականին բարձր ցուցանիշ է հետխորհրդային երկրների տնտեսությունների համար: Ընդ որում, վերջին տարիներին տնտեսական աճի տեմպերը էլ ավելի արագացան: Այսպես, 2002-2006 թվականների միջին տարեկան աճի տեմպերը 2.2 անգամ գերազանցում են դրանց նախորդած հինգ տարիների տնտեսական աճի տեմպերը<sup>1</sup>:

Գծապատկեր 2.1. ԱՊՀ երկրներում և Հայաստանում հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 1989-2007 թվականների ընթացքում

---

*1 1997-2000 թվականներին ՀՆԱ-ի միջին տարեկան աճը կազմել է 5.8 %:*



Հայաստանում տնտեսական զարգացումները ԱՊՀ անդամ մյուս երկրների համեմատությամբ առանձնահատուկ են նաև ՀՆԱ-ի հետխորհրդային մակարդակի նկատմամբ վերականգնման աստիճանի տեսանկյունից<sup>2</sup>: 1990–1993 թվականների շարունակական տնտեսական անկման արդյունքում 1993 թվականին ՀՆԱ-ի մակարդակը կազմեց 1989 թվականի մակարդակի ընդամենը 44.3%-ը (անկումը կազմել էր 55.7%): Նույն ժամանակահատվածում ԱՊՀ երկրների միջինացված ՀՆԱ ցուցանիշը կազմել էր 1989 թվականի 70.6%-ը (անկումը կազմել էր 29.4%): Չնայած այդ հանգամանքին, շնորհիվ հետագա տարիներին արձանագրված տնտեսական աճի անհամեմատ բարձր ցուցանիշների, Հայաստանում 2006 թվականին ՀՆԱ-ի մակարդակը կազմեց 1989 թվականի 129.2%-ը, այն դեպքում, երբ ԱՊՀ մյուս երկրներում այդ ցուցանիշը կազմել էր ընդամենը 92.8%: Սպասվում է, որ 2007 թվականին Հայաստանի իրական ՀՆԱ-ի մակարդակը կգերազանցի 1989 թվականի մակարդակը 43.6 %-ով, այն դեպքում, երբ ԱՊՀ միջինացված ցուցանիշը նոր կմոտենա այդ մակարդակին (99.3%):

Տնտեսության զարգացման բարձր աճի տեմպերը շարունակվեցին նաև 2007 թվականին՝ հունվար-հուլիս ամիսներին արձանագրվել է 12.1% տնտեսական աճ: Նշված ժամանակահատվածում տնտեսական աճի առավել բարձր տեմպեր են գրանցվել շինարարության և ծառայությունների ոլորտներում, որոնց հաշվին ապահովվել են տնտեսական աճի համապատասխանաբար 4.1 և 4.3 տոկոսային կետերը: Արդյունաբերությունը (ներառյալ էներգետիկան) 2007 թվականի հունվար-հուլիսին աճել է 2.1 %-ով և ապահովել 12.1 % տնտեսական աճի 0.5 տոկոսային կետը: Հաշվետու ժամանակահատվածում գյուղատնտեսության աճը կազմել է 2.3 %, իսկ ընդհանուր տնտեսական աճին նպաստման չափը՝ 0.4 տոկոսային կետ: Հաշվի առնելով 2007 թվականի առաջին յոթ ամիսների միտումները՝ 2007 թվականի համար ՀՆԱ-ի աճը կանխատեսվում է 11.1%-ի, իսկ ՀՆԱ-ի դեֆլյատորը՝ 4.2%-ի սահմաններում:

Վերջին տարիների մակրոտնտեսական զարգացումների արդյունքում ՀՆԱ-ի կազմում տեղի ունեցան էական կառուցվածքային տեղաշարժեր: Մասնավորապես, շինարարության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2002 թվականի 12.6%-ից 2006 թվականին հասել է 24.5 %-ի, արդյունաբերության

<sup>2</sup> Համեմատության համար հիմք է ընդունվել 1989 թվականը՝ խորհրդային շրջանում Հայաստանում տնտեսական աճի վերջին տարին:

տեսակարար կշիռը նվազել է 1 տոկոսային կետով, դառնալով 17.9 %, իսկ գյուղատնտեսության տեսակարար կշիռը 2002 թվականի 23.4 %-ից նվազել է և 2006 թվականին կազմել ՀՆԱ-ի 18.1%-ը:

2007 թվականի հունվար-հուլիսին բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը նախորդ տարվա հունվար-հուլիսի նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 17.5%-ով:

2007 թվականի հունվար-հուլիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ գյուղատնտեսության ոլորտում արձանագրվել է 2.2 % աճ: Ընդ որում, գյուղատնտեսության աճն ամբողջությամբ պայմանավորված է անասնաբուծության համախառն արտադրանքի աճով, որը 2007 թվականի հունվար-հուլիս ամիսներին կազմել է 4.4%, բուսաբուծության համախառն արտադրանքի աճի ինդեքսը կազմել է 100%:

Շինարարության ճյուղի աճը վերջին երեք տարիներին կազմել է միջինում ավելի քան 27%: Շինարարության ֆինանսավորման հիմնական աղբյուրներ են հաղիսացել բնակչության և կազմակերպությունների, պետական բյուջեի միջոցները: 2007 թվականի առաջին յոթ ամիսների ընթացքում իրականացված շինարարության ծավալները աճել են 19.2%-ով: Բնակչության և կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալները կազմել են ընդամենը իրականացված կապիտալ շինարարության համապատասխանաբար 58.0 և 27.8%-ը: Շինարարության հիմնական ուղղությունները ընդգրկել են անշարժ գույքի հետ կապված գործառնությունների, ինչպես նաև տրանսպորտի և կապի ոլորտները, որոնց բաժին է ընկել ընդամենը շինարարության 74.9 %-ը:

2007 թվականի հունվար-հուլիս ամիսներին արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի ծավալների մոտ 1.3% աճ՝ 2006 թվականի նույն ժամանակաշրջանում արձանագրված 1.0 % նվազման դիմաց: Աճը հիմնականում պայմանավորված է էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի, գոլորշու արտադրության և բաշխման ծավալների 7.2 % աճով: Աճ է արձանագրվել նաև հանքարդյունաբերությունում, մասնավորապես՝ մետաղե հանքաքարերի արդյունահանման և հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերում, համապատասխանաբար՝ 0.6 և 32.4 %-ի չափով: Չնայած մշակող արդյունաբերության ծավալների 0.2 % նվազման, աճ է գրանցվել նաև մշակող արդյունաբերության մի շարք ճյուղերում:

2002 թվականից սկսած ՀՆԱ-ի կառուցվածքում վերջնական սպառման ծախսերն ունեն նվազման միտում: 2006 թվականին դրանք կազմել են ՀՆԱ-ի 83.1%-ը՝ 2001 թվականի 104.8%-ի դիմաց: Վերջնական սպառման ծախսերի նվազմանը զուգահեռ 2006 թվականին աճել են խնայողությունները և ներդրումները ՀՆԱ-ում: 2006 թվականին ներդրումները ՀՆԱ-ում կազմեցին մոտ 33.3%:

### **Հարկաբյուջետային հատված**

Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեի եկամուտները կազմել են<sup>3</sup> 501.4 մլրդ դրամ, ընդ որում, 486.2 մլրդ դրամ կազմել են բյուջեի սեփական եկամուտները, և 15.2 մլրդ դրամ արտաքին աղբյուրներից ստացված պաշտոնական տրանսֆերտները:

<sup>3</sup> ՀՀ 2006-2008թթ պետական բյուջեների փաստացի, ծրագրային և կանխատեսումային ցուցանիշները ներկայացված են 2008 թվականից կիրառության մեջ մտնող ՊՖՎ (GFS)-2001 նոր դասակարգման համաձայն: Ըստ այդ դասակարգման հարկային եկամուտների կազմում են ընդգրկվում որոշ եկամտատեսակներ (նախկինում հաշվառվում էին որպես ոչ հարկային եկամուտ), իսկ նախկինում պետական բյուջեի եկամուտների կազմում հաշվառվող կապիտալի գործառնություններից եկամուտները ամփոփվում են ծախսերի «ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ» խմբի կազմում՝ բացասական նշանով: Բացի այդ, կենսաթոշակային բնագավառում իրականացվող

2007 թվականի համար հարկային եկամուտների և պետական տուրքերի ճշգրտված ծրագրային ցուցանիշը կազմել է 476.6 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 15.5%-ը, իսկ 2008 թվականի կանխատեսվողը՝ 595.1 մլրդ. դրամ կամ ՀՆԱ-ի 16.9%-ը:

2008 թվականի բյուջետային քաղաքականությունը միտված կլինի հարկային վարչարարության և կարգապահության բարելավմանը, կշարունակվի սոցիալական ոլորտ ուղղվող միջոցների ավելացումը: Վերջին տարիների հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ձեռքբերումներից է բյուջետավորման՝ հատկացվող ռեսուրսների օգտագործման մակարդակով ծրագրերի գնահատումից, ծրագրերի իրականացումից սպասվող արդյունքների գնահատման համակարգին անցնելու նպատակով ծրագրային բյուջետավորման տարրերի ներդրումը:

### **Դրամավարկային հատված**

2007 թվականին շարունակվում է 2006 թվականից որդեգրած գնաճի լիարժեք նպատակադրման ռազմավարությունը: ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության ծրագրով 2007 թվականի գնաճի նպատակային ցուցանիշը կազմում է 4% (+/- 1.5% միջակայքով):

2007 թվականի առաջին յոթ ամիսների փաստացի արդյունքներով փողի զանգվածը ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ նախորդ տարվա հուլիսի նկատմամբ աճել է 45.6%-ով, իսկ դրամային զանգվածը՝ 75.0%-ով:

2007 թվականի հուլիսի վերջում տարեվերջի նկատմամբ շրջանառության մեջ գտնվող կանխիկ դրամի ծավալն աճել է 17.7%-ով, իսկ դրամային ավանդներն՝ 32.8%-ով, այն դեպքում, երբ նախորդ տարի նույն համադրելի ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 6.5% և 9.2%:

Պահպանվել են բանկերի կողմից տնտեսության ֆինանսավորման աճի միտումները: 2007 թվականի հուլիսի վերջի դրությամբ տնտեսության վարկավորումն աճել է 33.2%-ով: Ընդ որում, նկատվել է դրամային վարկերի աճի տեմպի արագացում (61%՝ նախորդ տարվա 22.9%-ի դիմաց) և զուգահեռաբար արտարժույթային վարկերի աճի տեմպի դանդաղում (6.8%՝ նախորդ տարվա 9.1%-ի դիմաց) այստեղից էլ տնտեսության վարկավորման աճի մեջ այս տարի ևս պահպանվել է դրամային վարկերի աճի մեծ տեսակարար կշիռ, որը հիմնականում պայմանավորվել է սպառողական և հիփոթեքային վարկավորման աճի բարձր տեմպերով:

### **Սպառողական գներ**

2007 թվականի յոթ ամիսների ընթացքում գնաճի ցուցանիշը կազմել է 0.6%՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ գրանցելով 3.0 տոկոսային կետով նվազում:

2006 թվականի դեկտեմբերի նկատմամբ պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների ինդեքսը կազմել է 100.3%, ոչ պարենային ապրանքներինը՝ 100.6%, ծառայությունների սակագներինը՝ 101.3%:

### **Արտաքին հատված**

Արտահանման աճի տեմպերի արագացումը նկատվել է դեռ 2000 թվականից: 2000-2006 թվականներին արտահանման միջին տարեկան ծավալը 1999 թվականի համեմատ աճել է մոտ երեք

---

բարեփոխումներին համահունչ ՀՀ պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի եկամուտները ներառվել են պետական բյուջեի եկամուտների կազմում և ներկայացվել ՊՖՎ (GFS)-2001 դասակարգման համաձայն:

անգամ և կազմել 662 մլն ԱՄՆ դոլար՝ հիմնականում պայմանավորված թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի արտահանման մեծ ծավալներով: 2000-2006 թվականներին ներմուծման միջին տարեկան մակարդակը կազմել է 1181 մլն ԱՄՆ դոլար՝ 1999 թվականի համեմատ աճելով շուրջ 64%-ով: Արտաքին առևտրի բնականոն զարգացման և արտահանման խթանման քաղաքականության դրական արդյունքների մասին է վկայում ներմուծման ծածկման գործակցի մակարդակը՝ ապրանքների ներմուծման ծածկումը արտահանումով 1999 թվականի 33 %-ից աճել է և 2006 թվականին կազմել շուրջ 53%: Տնտեսության բացվածության աստիճանը կամ ապրանքների և ծառայությունների ապրանքաշրջանառություն/ՀՆԱ հարաբերակցությունը 2006 թվականին կազմել է մոտ 59% նախորդ երեք տարիների միջինում 73%-ի դիմաց:

1999 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը<sup>4</sup> կազմեց 400.7 մլն ԱՄՆ դոլար, իսկ ՀՆԱ-ում՝ 21.7%: 2000-2006 թվականներին ընթացիկ հաշվի պակասուրդը էապես կրճատվեց՝ 2006 թվականին հասնելով մոտ 167 մլն ԱՄՆ դոլարի՝ կազմելով ՀՆԱ-ի 2.3 %-ը:

Վերջին տարիներին հատկանշական ձեռքբերումներից է նաև պետական բյուջեի դեֆիցիտի մակարդակի իջեցմանը զուգահեռ պետական պարտքի մակարդակի կրճատումը: Նախորդ երեք տարիների միջինում 31.5%-ի դիմաց արտաքին պետական պարտքը 2006 թվականին կազմել է ՀՆԱ-ի 18.9%-ը: Պաշտոնական պահուստային ակտիվների մակարդակը 2006 թվականին ավելացել է 398 մլն ԱՄՆ դոլարով, ապահովելով ներմուծման 5.4 ամսյա ծածկույթ:

2007 թվականին ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության աճի միտումը շարունակվում է՝ ընթացիկ տարվա յոթ ամիսներին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ այն ավելացել է 37%-ով և կազմել 2262.9 մլն ԱՄՆ դոլար: Ապրանքների արտահանումը 2007 թվականի հունվար-հուլիսին կազմել է մոտ 631.1 մլն ԱՄՆ դոլար: Նախորդ տարվա յոթ ամիսների նկատմամբ արձանագրվել է ապրանքների արտահանման 20.8 % աճ, որը տեղի է ունեցել ինչպես դրամի արժևորման, այնպես էլ ադամանդագործության անկման պայմաններում: Արտահանման ապրանքային կառուցվածքից բացառելով «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի մասնակցությունը, արտահանման աճը 2007 թվականի յոթ ամիսներին կկազմեր 29.9%: Դրամի արժևորումը և բնակչության դրամական եկամուտների աճը նպաստել են ներմուծման աճին, որը ընթացիկ տարվա յոթ ամիսների տվյալներով կազմել է 1631.8 մլն ԱՄՆ դոլար և աճել 44.5%-ով, ընդ որում առանց «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի, ներմուծումը ավելացել է 45.8%-ով:

Տնտեսություն իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների հոսքերի ծավալը<sup>5</sup> 2007 թվականի առաջին վեց ամիսներին կազմել է մոտ 245 մլն ԱՄՆ դոլար և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 37.2%-ով: Հունվար-հունիս ամիսներին իրականացված շուրջ 152 մլն ԱՄՆ դոլարի օտարերկրյա ուղղակի ներդրումների 56.7%-ը ուղղվել է կապի, 9.2%-ը՝ օդային տրանսպորտի գործունեության, 8.2%-ը՝ շինարարության ոլորտներին, 8%-ը՝ սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությանը:

<sup>4</sup> Առանց պաշտոնական տրանսֆերտների:

<sup>5</sup> Առանց պետական կառավարման և բանկային համակարգով ստացված վարկերի:

2007 թվականի յոթ ամիսների արտաքին ապրանքաշրջանառության 31.8%-ը բաժին է ընկել ԱՊՀ, իսկ 38.8%-ը՝ Եվրամիության 27 երկրներին: ՀՀ խոշոր առևտրային գործընկերներն են՝ Գերմանիան, Բելգիան, ԱՄՆ-ը, Նիդեռլանդները, Չինաստանը և Իրանը, իսկ ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանը, Ուկրաինան, Ղազախստանը և Վրաստանը, որոնց բաժին է ընկնում ԱՊՀ երկրների հետ ապրանքաշրջանառության շուրջ 95%-ը:

### **Մակրոտնտեսական կանխատեսումներ**

2007 թվականի առաջին յոթ ամիսների միտումները թույլ են տալիս կանխատեսել տնտեսական աճի առնվազն 11.1 % մակարդակ: Աճի տեմպերի վերաբերյալ կանխատեսումները պայմանավորված են ինչպես արտաքին խնայողությունների հոսքերի որոշակի ավելացման, այնպես էլ ներքին խնայողությունների աճի կանխատեսումներով: Եկամտի ընդհանուր մակարդակի աճը և բաշխման բևեռացման որոշակի մեղմացումը կհանգեցնեն տնտեսությունում ներքին պահանջարկի աճին, հետևաբար նաև՝ եկամուտների ավելացմանը:

Ինչ վերաբերում է արտաքին պահանջարկին, ապա վերջին տարիների նկատված միտումները կշարունակվեն նաև հաջորդ տարիներին: Մասնավորապես, տեղական արտադրության նկատմամբ արտաքին պահանջարկի աճի պայմաններում ապրանքների և ծառայությունների արտահանման աճը 2007 թվականին կանխատեսվում է մոտ 16%-ի<sup>6</sup> չափով:

Միջնաժամկետ հատվածում ներմուծման ծավալների աճը կպայմանավորվի, ինչպես համախառն տնօրինվող եկամուտների աճով, այնպես էլ՝ տեղական արտադրությունը կազմակերպելու համար հումքի ներկրման և օտարերկրյա ուղղակի ներդրումներով ֆինանսավորվող տեխնոլոգիաների ներմուծման անհրաժեշտությամբ: Մյուս կողմից, կնվազեն ներմուծվող ապրանքները տեղական արտադրության ապրանքներով փոխարինելու՝ նախորդ տարիներին նկատված տեմպերը՝ պայմանավորված ներմուծվող ապրանքների փոխարինման հնարավորությունների սահմանափակությամբ: Արդյունքում՝ 2007 թվականին ապրանքների և ծառայությունների ներմուծման տարեկան աճը կկազմի շուրջ 18.1%: Ապրանքների արտահանումն ավելի արագ է աճելու, քան ծառայություններինը: Արտաքին ներդրումների ներհոսքի, ինչպես նաև ներմուծման փոխարինման և արտահանման աճի միտումների շարունակման պայմաններում ընթացիկ հաշվի հաշվեկշիռ (ներառյալ պաշտոնական տրանսֆերտները)/ՀՆԱ հարաբերությունը 2007 թվականին կկազմի շուրջ 4.4%:

Հարկաբյուջետային քաղաքականության գերակայությունները, որոնք ամրագրված են նաև 2003 թվականի օգոստոսի 8-ին ՀՀ կառավարության կողմից հաստատված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով, նախանշել են նշված քաղաքականության իրականացման միջնաժամկետ հիմնական ուղղությունները: Մասնավորապես, հարկային քաղաքականության իրագործման արդյունքում ակնկալվում է՝

- հարկային եկամուտների առաջանցիկ աճ ՀՆԱ-ի աճի նկատմամբ՝ գլխավորապես ստվերային տնտեսության կրճատման հաշվին,
- հարկային վարչարարության կատարելագործում, հարկային ու մաքսային մարմինների և տնտեսավարող սուբյեկտների փոխհարաբերությունների որակական բարելավում,

<sup>6</sup> Սույն բաժնում համեմատականները բերված են դոլարային արտահայտությամբ:

- հարկային համակարգի շարունակական պարզեցում:

Միջնաժամկետ հատվածում պետական բյուջեի ծախսային և դեֆիցիտի կառավարման քաղաքականությունները կառուցված են լինելու հիմնականում հետևյալ հարկաբյուջետային սկզբունքների վրա.

- պետական բյուջեի սոցիալականացման աստիճանի բարձրացում,
- ծախսերի գծով ապառքների կուտակման բացառում,
- դեֆիցիտի կայուն և ցածր մակարդակի պահպանում՝ պետական պարտքի բեռը չծանրացնելու նպատակով:

Աղյուսակ 2.1. Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ

Ցուցանիշը	հին դասակարգմամբ			նոր դասակարգմամբ <sup>7</sup>		
	2006	2007	2008	2006	2007	2008
	փաստացի	ծրագիր <sup>8</sup>	կանխ	փաստացի	ծրագիր	կանխ
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	2657.1	3076.0	3520.0	2657.1	3076.0	3520.0
ՀՆԱ-ի իրական աճ (%)	13.3	11.1	10.0	13.3	11.1	10.0
ՀՆԱ-ի դեֆլյատոր (%)	4.8	4.2	4.0	4.8	4.2	4.0
Անվանական ՀՆԱ (մլն ԱՄՆ դոլար)	6387.3	8616.2	10461.2	6387.3	8616.2	10461.2
ՀՆԱ մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	1983.0	2670.8	3237.5	1983.0	2670.8	3237.5
Գնաճ (ժ-դրո-ի վերջ) (%)	5.2	4.0+/-1.5	3.0+/-1.5	5.2	4.0+/-1.5	4.0+/-1.5
Փոխարժեք (ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար, միջին)	416.0	357.0	336.5	416.0	357.0	336.5
Պետական բյուջեի ընդամենը եկամուտներ (մլրդ դրամ)	517.4	605.9	752.8	501.4	586.1	744.8
Պետական բյուջեի ընդամենը եկամուտներ/ ՀՆԱ (%)	19.5	19.7	21.4	18.9	19.1	21.2
Պետական բյուջեի հարկային եկամուտներ և տուրքեր (մլրդ դրամ)	385.1	472.3	591.1	385.1	476.6	595.1
Պետական բյուջեի հարկային եկամուտներ և տուրքեր/ ՀՆԱ (%)	14.5	15.4	16.8	14.5	15.5	16.9
Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ (մլրդ դրամ)	75.9	85.0	104.9	75.9	85.0	104.9
Պետական բյուջեի ընդամենը ծախսեր (մլրդ դրամ)	552.7	674.4	855.0	518.8	632.5	820.8
Պետական բյուջեի ընդամենը ծախսեր/ ՀՆԱ (%)	20.8	21.9	24.3	19.5	20.6	23.3
Պետական բյուջեի դեֆիցիտ (մլրդ դրամ)	35.3	68.5	102.2	17.4	46.4	76.0
Պետական բյուջեի դեֆիցիտ/ ՀՆԱ (%)	1.3	2.23	2.9	0.6	1.5	2.1
Պետական բյուջեի ընդամենը եկամուտներ (մլն ԱՄՆ դոլար)	1234.7	1697.3	2237.2	1205.3	1641.7	2213.3
Պետական բյուջեի հարկային եկամուտներ և տուրքեր (մլն ԱՄՆ դոլար)	925.8	1323.0	1756.6	925.8	1335.1	1768.6
Պետական բյուջեի ընդամենը ծախսեր (մլն ԱՄՆ դոլար)	1328.6	1889.2	2541.0	1247.1	1771.7	2439.1

<sup>7</sup> 2008 թվականից կիրառության մեջ մտնող ՊՖՎ (GFS)-2001 նոր դասակարգման համաձայն հարկային եկամուտների կազմում են ընդգրկվում հանքարդյունահանման լիցենզառուների և հանքարդյունահանման հատուկ լիցենզառուների կողմից վճարվող տոյաքին, կոնցեսիոն և ռադիոհաճախականության թույլտվության տրամադրման վճարները (նախկինում հաշվառվում էին որպես ոչ հարկային եկամուտներ), իսկ նախկինում պետական բյուջեի եկամուտների կազմում հաշվառվող կապիտալի գործառնություններից եկամուտները ամփոփվում են ծախսերի «ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ» խմբի կազմում՝ բացասական նշանով: Բացի այդ, կենսաբոլակային բնագավառում իրականացվող բարեփոխումներին համահունչ ՀՀ պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի եկամուտները ներառվել են պետական բյուջեի եկամուտների կազմում և ներկայացվել ՊՖՎ (GFS)-2001 նոր դասակարգման համաձայն:

<sup>8</sup> ՀՆԱ-ի նկատմամբ 2007 թվականի համար հաստատված ցուցանիշների հարաբերության հաշվարկներում օգտագործվել է 2007 թվականի ՀՆԱ-ի ներկայումս կանխատեսվող մեծությունը:



Պետական բյուջեի դեֆիցիտ (մլն ԱՄՆ դոլար)	85.1	191.9	303.8	41.8	129.9	225.8
Պետական պարտք՝ ընդամենը (մլն ԱՄՆ դոլար)	1400.1	1515.5 <sup>9</sup>	1730.7	1400.1	1515.5	1730.7
Պետական պարտք/ՀՆԱ (%)	21.9	17.5	16.6	21.9	17.5	16.6
- Արտաքին պարտք (մլն ԱՄՆ դոլար)	1205.6	1329.6	1459.1	1205.6	1329.6	1459.1
որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտք (մլն ԱՄՆ դոլար)	163.7	157.9	143.5	163.7	157.9	143.5
Արտաքին պարտք/ՀՆԱ (%)	18.9	15.4	13.9	18.9	15.4	13.9
-Ներքին պարտք (մլն ԱՄՆ դոլար)	194.5	185.9 <sup>10</sup>	271.5 <sup>11</sup>	194.5	185.9	271.5
Ներքին պարտք/ՀՆԱ (%)	3.0	2.2	2.6	3.0	2.2	2.6
Ապրանքային հաշվեկշիռ (մլն ԱՄՆ դոլար)	-902.7	-903	-1210	-902.7	-903	-1210
Ապրանքների ներմուծում, ՖՕԲ (մլն ԱՄՆ դոլար)	-1921.3	-2151	-2652	-1921.3	-2151	-2652
Ներմուծում (ապրանքներ, ծառայություններ)/ ՀՆԱ (%)	-37.6	-31.7	-32.2	-37.6	-31.7	-32.2
Ապրանքների արտահանում, ՖՕԲ (մլն ԱՄՆ դոլար)	1018.6	1248	1442	1018.6	1248	1442
Արտահանում (ապրանքներ, ծառայություններ)/ ՀՆԱ (%)	21.8	20.1	19.1	21.8	20.1	19.1

<sup>9</sup> 2007 թվականի համար ներկայացված են պետական պարտքի տարեկան սպասողական ցուցանիշները:

<sup>10</sup> 2007 թվականի համար ներքին պետական պարտքը հաշվարկվել է 1 ԱՄՆ դոլար = 357 փոխարժեքով:

<sup>11</sup> 2008 թվականի համար ներքին պետական պարտքը հաշվարկվել է 1 ԱՄՆ դոլար = 336.5 փոխարժեքով: